ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն երևանյան գրասենյակ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի

և

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի
միջև

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը (հետայսու՝ «ԵԱՀԿ») և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը (հետայսու՝ «ԿԸՀ»), հետայսու համատեղ կանվանվեն «Կողմեր»,

Գիտակցելով իրապես ժողովրդավարական ընտրությունների՝ որպես իրավունքի գերակայության անքակտելի բաղադրիչի և ժողովրդավարական կառավարման հիմնաքարի կարևորությունը,

Հաշվի առնելով ժողովրդավարական ընտրությունների մասով ԵԱՀԿ-ի առջև ստանձնած համապատասխան պարտավորությունները,

Ընդունելով ընտրությունների վարչարարությունը բարելավելու և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (հետայսու՝ «Ընտրական օրենսգիրք») պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը,

նկատի ունենալով, որ ԵԱՀԿ-ն ցանկանում է երկարաժամկետ օժանդակություն ցուցաբերել ԿԸՀ-ին ինստիտուցիոնալ, մարդկային և տեխնիկական կարողությունների զարգացման միջոցով ընտրությունների պատշաճ վարչարարությունն ապահովելու գործում,

Կողմերը համաձայնության եկան հետևյալի շուրջ.

1. Արտաբյուջետային և Միասնական բյուջետային գործունեության շրջանակներում ԵԱՀԿ-ն հնարավորության սահմաններում փորձելու է ԿԸՀ-ին անհրաժեշտ

տեխնիկական, կրթական, տեղեկատվական և այլ օժանդակություն տրամադրել կամ ապահովել դրա տրամադրումը:

2. Կողմերի միջև համագործակցության հիմնական ոլորտները ներառում են.
- Տեխնիկական օժանդակություն «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի գործունեության բարելավմանը և ԿԸՀ-ի ներքին համակարգչային ցանցի արդիականացմանը,
- Օժանդակություն հավաստագրման դասընթացների կազմակերպմանը և անցկացմանը, ընտրական պաշտոնյաների, դիտորդների և համապատասխան այլ խմբերի ուսուցմանը՝ Ընտրական օրենսգրքի պահանջներին համահունչ,
- Օժանդակություն Ընտրական օրենսգրքով ամրագրված ընտրական գործընթացների, իրավունքների և համապատասխան պարտավորությունների առնչությամբ իրազեկության բարձրացման և տեղեկատվական նյութերի պատրաստմանը,
- Միջազգային լավագույն փորձի ներկայացումն ընտրական պաշտոնյաներին, ներառյալ՝ ԿԸՀ-ին,
- Օժանդակություն Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կարողությունների զարգացմանը:

3. ԵԱՀԿ-ն ի կատար է ածելու աջակցության համաձայնեցված ծրագրերի տարբեր բաղադրիչները կամ անմիջականորեն, կամ՝ ԵԱՀԿ-ի Կարգավորման և կառավարման ընդհանուր համակարգին համապատասխան ընտրված՝ իրագործող գործընկերների միջոցով:

4. Առկա միջոցների արդյունավետ տնօրինումն ապահովելու նպատակով Կողմերը համագործակցելու են աջակցության ցուցաբերման լավագույն մեխանիզմների ընտրության հարցում:

Կողմերը պետք է համագործակցեն բարեխղճորեն, որպեսզի խթանեն առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Այդ նպատակով Կողմերը կհանդիպեն կանոնավոր կերպով, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ՝ քննարկելու սույն հուշագրի իրականացումը: Հանդիպումները կարող են տեղի ունենալ սույն Հուշագիրը ստորագրողների մակարդակով կամ որեւէ այլ մակարդակով, ինչպես հարմար գտնեն ստորագրողները:

5. ԿԸՀ-ն փորձելու է ապահովել ԵԱՀԿ-ի կողմից տրամադրվող միջոցների պատշաճ և հարատևելի օգտագործումը:

6. Կողմերը փորձելու են Փոխըմբռնման սույն հուշագրի կատարման ընթացքում համապատասխան դեպքերում կնքել երկրորդային համաձայնագրեր (օրինակ՝ նվիրատվության և վարձակալման համաձայնագրեր տեխնիկական սարքավորումների տրամադրման պարագայում):

7. Կողմերը կանոնավեր կերպով իրականացնելու են սույն Հուշագրի խնդրո առարկային վերաբերող համապատասխան տեղեկությունների և տպագիր նյութերի փոխանակումը:

8. Սույն Հուշագրի որևէ դրույթ կամ սույն Հուշագրին առնչվող որևէ պայման չի կարող համարվել ԵԱՀԿ-ի և/կամ վերջինիս աշխատողներին վերապահված արտոնություններից և անձեռնմխելիություններից հրաժարում:

9. Սույն Հուշագրի կիրառության և մեկնաբանության առնչությամբ ծագող ցանկացած վեճ Կողմերը լուծում են անմիջական խորհրդակցությունների միջոցով:

10. Սույն Հուշագրում փոփոխությունները կատարվելու են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և արտացոլվելու են առանձին Արձանագրության մեջ: Արձանագրությունն ուժի մեջ մտնելու է դրանով նախատեսված կարգով և դառնալու է սույն Հուշագրի անբաժանելի մասը:

11. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնելու երկու Կողմերի կողմից ստորագրվելուց հետո և մնալու է ուժի մեջ Հայաստանի 2012 թվականի խորհրդարանական և 2013 թվականի նախագահական ընտրություններ ժամանակահատվածում:

12. Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է միակողմանիորեն դադարեցնել սույն Հուշագիրը՝ այդ մասին նախապես երեսուն (30) օրացուցային օր առաջ գրավոր ծանուցելով մյուսին:

13. Սույն Հուշագրի դադարեցումը չի ազդի Հուշագրի գործողության ընթացքում մեկնարկած ծրագրերի վրա, եթե Կողմերի միջև այլ պայմանավորվածություն չկա:

14. Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում _____-ին անգլերեն և հայերեն երկուական օրինակով, ընդ որում՝ բոլոր տեքստերն ունեն հավասար իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրամադրվելու է անգլերեն և հայերեն մեկական օրինակ:

15. Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանության տարակարծություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի անունից	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության անունից
Նախագահ Տիգրան Միսկոչյան	Դեսպան Անդրեյ Սորոկին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար